# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մարտի 2024 թվականի N 95 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ԹԱՎՇՈՒՏ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 0,5 ՀԵԿՏԱՐ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-041-0105-0001-ԻՑ) 3-ՐԴ ԿԱՐԳԻ ԽՈՏՀԱՐՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԷԴԳԱՐ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետյան կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման 1-ին, 3-րդ և 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 19-ի թիվ 24-Ա որոշումը և 2024 թվականի մարտի 1-ին Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Էդգար Սարգսյանի դիմումը. որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի (բնակավայր Թավշուտ) սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,5 հեկտար 3-րդ կարգի հոտհարքը (կադաստրային ծածկագիր՝ 08-041-0105-0001-ից) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության քաղաքացի Էդգար Սամվելի Սարգսյանին (ն.**ք.՝ 010075406, տրված՝ 12.12.2017թ., 034-ի կողմից)** և կնքել պայմանագիր՝ պարզ գրավոր ձևով

2. Որոշման 1-ին կետում նշված հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել է **2010 ( երկու հազար տաս)** Հայաստանի Հանրապետության դրամ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի մարտի 4
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետությանՇիրակիմարզիԱշոցքհամայնք,
ՀՀ Շիրակիմարզ, Աշոցքհամայնք, գ. Աշոցք, Հրապարակ 1, Հեռ. 0245
2-14-82 , ashotsq.hamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2024 թվականի N 96-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Քաղաքացի Վելիխան Խաչատուրի Թորոսյանը /ՀՀ, Շիրակի մարզ, Աշոցք, գ. Կարմրավան, 2-րդ փողոց, տուն 32, AT0210037/, հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանարպետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2024 թվականի մարտի 4-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2.Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տվյալների հարկման օբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կարմրավան բնակավայրի տարածքում գտնվող ներքոհիշյալ անշարժ գույքերը հանդիսանում են քաղաքացի Վելիխան Խաչատուրի Թորոսյանի սեփականությունը և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) գ. Կարմրավան, /կադաստրային ծածկագիր՝ 08-054-0119-0002/ 2,477 հա խոտհարքի համար,

2) գ. Կարմրավան, /կադաստրային ծածկագիր՝ 08-054-0106-0006/ 3,374 հա անջրդի վարելահողի համար,

3) գ. Կարմրավան, /կադաստրային ծածկագիր՝ 08-054-0101-0011/ 0,86 հա անջրդի վարելահողի համար,

4) գ. Կարմրավան, /կադաստրային ծածկագիր՝ 08-054-0115-0037/ 0,423 հա անջրդի վարելահողի համար

5) գ. Կարմրավան, /կադաստրային ծածկագիր՝ 08-054-0117-0002/ 0,812 հա անջրդի վարելահողի համար,

6) գ. Կարմրավան, /կադաստրային ծածկագիր՝ 08-054-0001-0007/ 0,34 հա բնակելի կառուցապատման հողի համար,

7) գ. Կարմրավան, /կադաստրային ծածկագիր՝ 08-054-0115-0004/ 0,315 հա անջրդի վարելահողի համար,

8) գ. Կարմրավան, /կադաստրային ծածկագիր՝ 08-054-0115-0061/ 4,037 հա անջրդի վարելահողի համար,

ընդհանուր մինչև 2020 թվականը ապառքը՝ 165 904 ՀՀ դրամ, տույժ՝ 94 160 ՀՀ դրամ, վճարման ենթակա՝ 260 064 ՀՀ դրամ, 2021-2024 թվականներին՝ ապառք՝ 95 805 ՀՀ դրամ, տույժ՝ 10 662 ՀՀ դրամ, ենթակա վճարման՝ 106 467 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 366 531 ՀՀ դրամ պարտք:

Վելիխան Խաչատուրի Թորոսյանը պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 09.02.2024 թիվ 13 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վելիխան Խաչատուրի Թորոսյանը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո, պնդում չի ներկայացրել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

**3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, ինչպես նաև բազմաբնակարան շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի՝ բազմաբնակարան շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով այդ սեփականատերերին պատկանող հողամասի մասով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարն օրենքով

սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ, 225-րդ, 398-րդ և 401-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-60-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Քաղաքացի Վելիխան Խաչատուրի Թորոսյանից հօգուտ Աշոցք համայնքի բյուջե գանձել 366 531 (երեք հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով՝ պատշաճ ձևով հանձնել Վելիխան Խաչատուրի Թորոսյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից(ashotsq.am և azdarar.am կայքերի միջոցով):

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Աշոցք համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանարապետության Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թ. մարտի 4
գ. Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մարտի 2024 թվականի N 97 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ԲԱՎՐԱ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 2,0 ՀԵԿՏԱՐ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-026-0576-0001-ԻՑ) 3-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՂԱԹԵԼ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետյան կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման 1-ին, 2-րդ և 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 19-ի թիվ 24-Ա որոշումը և 2024 թվականի մարտի 6-ին Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված **Սաղաթել Մուրադյանի** դիմումը. որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի (բնակավայր Բավրա) սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 2,0 հեկտար 3-րդ կարգի արոտը (կադաստրային ծածկագիր՝ 08-026-0576-0001-ից) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության քաղաքացի Սաղաթել Մերուժանի Մուրադյանին (**անձ.՝ 66 N 4454561, տրված՝ 14.04.2023թ., ՄՎԴ 0672-ի կողմից)** և կնքել պայմանագիր՝ պարզ գրավոր ձևով

2. Որոշման 1-ին կետում նշված հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել է **6810 (վեց հազար ութ հարյուր տաս)** Հայաստանի Հանրապետության դրամ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի մարտի 6
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մարտի 2024 թվականի N 98 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ԹԱՎՇՈՒՏ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 2,0 ՀԵԿՏԱՐ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-041-0111-0001-ԻՑ) 3-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՂԱԹԵԼ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետյան կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման 1-ին, 2-րդ և 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 19-ի թիվ 24-Ա որոշումը և 2024 թվականի մարտի 6-ին Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված **Սաղաթել Մուրադյանի** դիմումը. որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի (բնակավայր Թավշուտ) սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 2,0 հեկտար 3-րդ կարգի արոտը (կադաստրային ծածկագիր՝ 08-041-0111-0001-ից) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության քաղաքացի Սաղաթել Մերուժանի Մուրադյանին (**անձ.՝ 66 N 4454561, տրված՝ 14.04.2023թ., ՄՎԴ 0672-ի կողմից)** և կնքել պայմանագիր՝ պարզ գրավոր ձևով

2. Որոշման 1-ին կետում նշված հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել է **6810 (վեց հազար ութ հարյուր տաս)** Հայաստանի Հանրապետության դրամ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի մարտի 6
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մարտի 2024 թվականի N 99 - Ա

### 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-ԻՆ ՏՐՎԱԾ N 9 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Աշոցքի 1-ին փողոցի թիվ 11 հասցեում գտնվող սպասարկման օբյեկտի կառուցում /լրակառուցում/» շինարարական աշխատանքների կատարման համար 2022 թվականի հուլիսի 12-ին Աշոցք համայնքի ղեկավարի կողմից քաղաքացի Վարդան Ղազարյանին տրվել է N 9 շինարարության թույլտվությունը:
Շինարարական աշխատանքները ավարտվել են սահմանված ժամկետում:
Կառուցապատողը դիմել է Աշոցք համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտը ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով որոշում եմ.
1. 2022 թվականի հուլիսի 12-ին տրված N 9 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությանը ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի մարտի 07
գյուղ Աշոցք